

**ՀԱՄԱԹՕՏՈՒԹԻՒՆ ԺՆՆԴԵԱՆ ԵՒ ԳԻՊՈՒԱԾՈՑ
ՄԱՆՈՒԷԼ ՇԱՀԻՆԵԱՆ ԿԻՒՄԻՇԻԱՆՆԵՑԻ ՊԵՏՄԱՐԱՆԻՍ
1835 Ի ՍՈՒՐԲ ԽԱԶ ՎԱՆՍ ՂՐԻՄՈՑ. *)**

Գալստեամբ վեհին ճանեցա՛մ գազատութիւն մեր:

Մինչ ակն ունէաք, թէ ըստ բաղմիցս գրաւոր խոստմամբ Վեհապետին, ի բարեաւ գալ նորա ի Տփլիս՝ ինքնին ականատես իմ շինութեանց և մտախոյզ՝ կառավարչացն իւր զբութեանց անձամբ անձին եղեալ, Հայրական և Հայրապետական իշխանութեան զվա[յ]ելչականն ունի տնօրինել:

Իսկ նորա եկեալ՝ յետ ընդարձակելոյ կամաց և պատուոյ իւրոյ, ոչ եղեն կամք նմա ծանօթանալ անցնիւրոց արժանաւոր ծառայութեանց, և առհաւատչայից հատուցմանց, որ շուք կոչման իւրոյ գայնալիս խնդրէր, այլ ամենայն ջերմեռանդութեամբ հետախոյզ էր, թէ յո՞ր եկեղեցւոյ, կամ ի քահանայէ նոր աղբիւր արդեանց ունի ըղիւիլ և զովացուցանել զծարաւ կամաց իւրոց, ուստի ի մտեալ յօրէն ի Թիֆլիզ, միշտ առերեսս զմեզ ի սէր և ի յարգանս ունել յաչս այլոց ցուցանէր, զի նախ զայլոցն կթեսցէ զկութ, առանց խրտնեցուցանելոյ զոր:

Յայտունակ հոգսս զգալով զկամս ընդհանրական Տեառն, պատշաճ համարեցաք խնդրել զաղատութիւն մեր և վերադառնալ ի Ղրիմ: Առ այս խնդրոյ մեր որոշման և վճռատութեան, թէ ո՞րքան մեզ տաժանմունք և թղթոց երթևեկութեանց առիթք եղեն, օրինակքն ընդարձակ յՕրագրութեանս ցուցանեն, և հինգամսեայ միջոցի երկարութիւն միայն ի Թիֆլիզ, ուր օր յօրէ ձգելով կենամաշ զմեզ առնէր, քանզի թէ առ ի՞նչ դատողութեամբ, ոչ կամէր թողուլ զմեզ, ինքեան և խորհրդականացն էր յայտնի: Եւ ըստ առաջին գրաւոր խոստմանն թողուլ զմեզ ի Սուրբ Սարգսի ուխտատեղին արդեամբ նորին մեզ կառավարիլ, գործակալացն և իւր ծարաւոյն ոչ լինէր զովացութիւն, զի ականածութեան պարագայք նոցին, ըստ ենթադրութեան իւրեանց, իբր լրացեալ հա-

*) Տես «Արարատ» 1917 թ. Յունիս-Յուլիս եւ նախորդ ամիսները:

մարէին, և այլ օտարական անձանց հարկաւոր կարստութիւն ունիլ ոչ յուսային:

Վասնորոյ գոհանամ զԱստուծոյ, որ ի 1835, ի նոյմ. 10-էն սկսեալ հազիւ ի 1836 և ի 10 մարտի ընկալայ զազատութեան իմոյ զպաշտօնութ զայս օրինակ.

«Ըստ Հրովարտակի նորին Կայսերական Մեծութեան նիւթայ Պաւլովիչի, և ինքնակալի ամենայն ուսաց և այլոց ևն ևն».

«Յայտարար սորին քարձր պատուոյ արժանի Մանուէլ վարդապետն հայոց դնայ ըստ սեպհական հարկաւորութեան իւրոյ, թի նահանգն Ղրիմու ի քաղաքն Ղարասուպաղար հանդերձ ծառայիւք իւրովք, վասնորոյ քարեհաճե[ս]ցին զինուորական և քաղաքական աստիճանաւորք ի ճանապարհին և ի բերդադրունս ճառնել նմա զանարգել թոյլատուութիւն, և տալ նմա օրինաւոր զործակցութիւն ի հարկաւոր զիպուածս: Որոյ ի հաստատութիւն տուաւ այս նմա ստորագրութեամբ մերով և գրոշմամբ կնքոյս Հայրապետանի:

Ի 10 մարտի 1836 ամի

Ի թիֆլիզ քաղաքի

№ 62

Նորին Կայսերական Մեծութեան Ամենաողորմած Թագաւորին իմոյ Ասպետ սրբոյն Աղէքսանդրի Նեսկոյ անդամանդեայ նշանաց

Կաթուղիկոս ամենայն Հայոց Յօհաննէս:

Առիթ Դեղթափ տեսրակին և այլոց:

Յայս իմ Թափառական պարապոյ ժամանակիս ի Տփլիս՝ զէպ եղև ինձ ընթեռնուլ զՏետրակ մի տպեալ ի Կալկաթայ ի տպարանի կամ ի գործատան Մկրտիչ Միսիօնարաց. ի 1832 յամի Տեառն:

Այս տետրակ ըստ հաճոյս զրոգաց կոչի՝ Մտածութիւն ի վերայ վարդապետութեան հաշտութեան, Մասն Առաջին:

Յորում պարունակին. 1. Նախ՝ թէ Հացիւ և զինեաւ զոյափոխութիւնք ոչ կարեն լինիլ: 2. Երկրորդ՝ Սուրբ կոյսն Մարիամ, Սուրբ Յօհաննէս Մկրտիչ, Առաքեալք, Մարգարէք և Մեծն Գրիգոր, և այլ Սուրբք ոչ ունին կարողութիւն և ոչ կարեն լինիլ ումէք բարեխօսք, զի միայն բարեխօս մեր Քրիստոս է: 3. Երրորդ՝ Հօր Աստուծոյ վասն էր Մօրուք և պատկեր ձևացուցանէք:

4. Զորքորդ, ինչ և իցէ պատկեր 'ի մէջ եկեղեցւոյ, աւելորդ կոտորածութիւն է: 5. Լուսաւորչայ Աջոփն Մեռան օրհնել և այլ մասանց երկրպագութիւն մատուցանել անարժանք են: 6. Քահանայք, որք զպատարագս մատուցանեն, կարեն և զհաւասարս իւրեանց ձեռնադրել: 7. Քահանայք կարեն և զՄեռան օրհնել:

Զայս ամենայն ճարտար գրութեամբ և վկայութեամբ յայն եղանակ շարադրեալ են, զի եթէ հարիւր անձինք ժողովեալք ի մի, ընթերցմամբ ի միտ առցեն յինչ ազգաց և իցեն քրիստոնեայք, հազիւ երկուք ի նոցանէ մնան առանց զայթակղութեանց, իննսուն և ութն գլխովին զայթակղեալ թերահաւատութեամբ հակամիտեն ի բանս նոցին, զի թիւնալի ձկնդեղ իմն է:

Նոյնպէս ի Մօսկօֆ և Տետրակ մի յայնմանէ անկեալ ի ձեռս գիտնական Միքայիլ վարդապետին Սալանթեան, առաքէ առ Կաթողիկոսն Յօհաննէս ի Տփլիս, զի հոգ կալցեն շիջուցանել զայն հրդեհ օրինաւոր պատասխանագրութեամբք և տպմամբ: Վստահութիւն և մեզ եղև յայտնել զընթերցեալն մեր, նախ՝ Սինօթական Ասպետափառ Արք եպիսկոպոս Հարց և Ազգապետ Կառավարչաց, և նօքօք ընդհանրական գլուխ Հայրապետին, որք ուտեն և գումարեն զնուէրս ժողովրդոց, խնամարկեալ բուն հարցին վանել և տարագրել զգայլսն ի հօտէ դառանց: Բայց նոցա այլովք շահեկանովք զբաղեալք, թերևս ոչ գտանէին ժամանակ առ օգուտ ազգին պարապելոյ:

Իբրև տարածեցաւ ի Տփլիս համբաւ տպեալ Տետրակին, շրջունք տրտնջանաց և Ազգային անդոնունակութիւնք օր ըստ յօրէ սկսան ընծիւղիլ, պատշաճ և անպատշաճ բամբասանօք, ի վերայ հոգեւորականացն մերոց: Վասնորոյ, թէև զրկեալ իմ յամենայն միութարութեանց, մինչ զի և յօրական ասլուստից, ի շնորհաց Ազգօգուտ Հայրապետին մերոյ, բայց ի սէր Սուրբ եկեղեցւոյ Լուսաւորչակրօնիցս և սիրելի ուղղափառ Ազգին իմոյ, Հայրենասիրական եռանդիւ շարժեալ՝ վաթսուն և ինն ամեայ ծերութեամբ, զողոջուն մատուցն իմ գրեցին ըստ կարեաց զուղութիւն և զճմարտութիւն օրինաւոր պաշտեղաց Սուրբ եկեղեցւոյն մերոյ, համապատասխանելով ամենայն թիւնալի առարկութեանց նոցին, որք են Լօթերական, և Կալուինական ազանդաւորութիւնք:

Ուստի անուանակոչեցի զՏետրական մեր Դեղթափ և Թիւրակէս, աւարտեալ զնա ի Տփլիս 1836, յունվ. 25, յաւուր տօնի Սրբոյն Սարգսի զօրավարի, ի գրան նորին Տաճարի, յանցս Սէ[յ]-տապատու, տեսեալ զահերիցանց խոտտանային տպել, բայց ոչ կարեմ յուսալ՝ եթէ ծախուցն այլք ոչ օգնեսցեն:

Ըստ պատշաճի տեղւոյս՝ յիշեցից և զայլ ձեռնարկան իմ,

յայտպիսի առարկայս պատահամար, ի գրչութիւն զմեզ յորդորու-
ղաց.

1. Նախապէս ի 10 թղթահամարի*) ծանուցելոյս կերպի
գրեցան յինէն Պատմութիւն Ղուկաս Հայրապետի վախճանին, և
յաջորդող Հայրապետաց դարձուածոց կերպք, Հրովարտակաց և
Ռեքաղաց օրինակօք, միայն Առաջին Հատորն:

2. Երկրորդ՝ Պօլսոյ Յօհաննէս Պատրիարզն որ խարդախ
գտանեցաւ առ Դանիէլ Հայրապետն և գրութիւնք նորին՝ որ հա-
կառակ վկայէր մինն միւսոյն, որովք կամէր երբեմն դառնալ իւր
անմեղ ցուցանել, և երբեմն զվրէժինդրութիւն առնուլ կամէր ի
ձեռն խնքնակալ Կայսերն ամենայն Ռուսաց, որոյ գրութիւնք
անընդունակ եղեալ, աշխատասիրեցաք ԿՇԻՄ գրութեանց յօրի-
նել, որ բանասէրք ի ձեռն պատրաստ կշռեալ յատեսցեն, զբան
նորին Յօհաննու Պատրիարզի և Ախոյեանից նորին:

3. Երրորդ՝ Հափաւոր գրութիւն մի հարկաւորեցաք գրել ի
1814 և ի դեկտ. 4, առ Արքայեցիս յաղագս օրացուցի նոցին հեղ-
նական ոճով տպեցման, և Արքայի վարուց Պատմութեան ան-
պատշաճ խօսակցութեանց. զայս գրութիւն ի Փարէժ եղեալ
յայնժամ և այժմ ի Տփլիս եկեալ՝ Պոֆէսօր Յակոբ Զրպետեանի
ձեռամբն հասուցեալ եմ առ նոսա:

4. Չորրորդ՝ առ Պօլսոյ Պօղոս Պատրիարզն ի 1820 և ի
նոյեմբ. 24 ընդդէմ Հրաւէր սիրոյ տետրակի իւրոյ՝ արարեալ իւր
ներգործութեանցն, որ վերջի օծութեան իւղ օրհնելով կամէր
օրինադրել յազդ մեր, որ եղև պատճառ խռովութեանց և մահա-
գործութեանց, զայս գրութիւն Պէզարապիոյ Գրիգոր եպիսկոպոսի
ձեռամբ առաքեցի ի Պօլիս:

5. Հինգերորդ. ի 40 թղթահամարին**), որ յիշեցաւ
Ղրիմու վարժարանի որպիսութիւնն, հարկաւորեցաք տետրակ մի
ի 1821 յօրինել՝ և ի Մօսկօֆ տպեցուցանել, որ յորդորէ զման-
կունս ի բարի վարս, և ի քրիստոնէական հարկաւոր գիտելիս
պարզ և դիւրին ոճով, զի փութով ի միտ առնուլ կարասցեն ըն-
թերցողք:

6. Վեցերորդ. ի Վէնէտիկ վասն արդարացուցանելոյ զլէօն
Պապն, զՏոմար նորին երեք յեղուաւ նոր թարգմանութեամբ
Հայերէն, Լաթիներէն և Յունարէն, ի միասին տպեալք, և ի Արբոց
Հայրապետաց մերոց զվկայութիւնս համեմատեալ բանից Լէօնին,
կամեն զի համաձայն ցուցցեն զլէօնն ընդ ուղղափառ Հայրապե-

*) Տես Արարատ 4945, սեպտ.-հոկտ. էջ 754.

**) Տես Արարատ 4945. նոյ.-դեկտ. էջ 874.

տաց, վասնորոյ գրեցաք Տետրակ մի ի 1826 և ի մայիսի 15, անուանեալ զնա ՓԱՐՉԱՔԱՐ, զի որպէս զմաքրութիւն ոսկոյն փորձաքարիւ ճանաչեն, նոյնպէս գտաեալն ի վէնէտիկ, ընդ տետրակին մեր փորձիւ քննեսցին ուղղափառ հոգով քննիչք:

7. Եօթներորդ. Մինչ ի Պօլիս էի, ոմն ի սիրելի բարեկամաց իմոց խնդրեալ էր յինէն, վասն Պահոց հարկաւորութեանց՝ գրութեամբ տալ ինքեան, զոմանս նիւթս յայնժամ հաւաքեալ, ըստ տարազրութեան մերոյ՝ տարազիր թողաք և զնա, բայց ի Տփլիս երբ տեսաք իսպառ անհետ լինիլ պահոցն, և հեղնեալ ի թոյլամորթ որովայնամօլից, ուստի աշխատեալ գրեցաք ըստ չափու կարեաց մերոց ի 1832, տալով առիթ ապագայ Հարց և Եղբարց, զի մի սով լսելոյ բանին Աստուծոյ տիրեսցին հեղգացելոցն յօրինաց:

8. Ութներորդ. որպէս յուսա[յ]եաք ի մանկութենէ, գտանել զԱթոռն Աթոռայնովք, արտաքոյ յուսացեալ յամենայնէ տեսեալ, զհարկաւոր պարագայս ի դիր արձանացուցեալ՝ ի 1831 զտետրակն անուանեցաք Աղետ գիտելեաց:

9. Իններորդ. ի Պատմութեանց համառօտութեամբ հաւաքեալ զանցս ի Սուրբ Լուսաւորչէ մերմէ ցարդ 1831 անուանեալ զնա.*)

10. Տասներորդն՝ Էկզրափ և Թիւրակէս սրպէս յառաջ գրեցաք ի 1836, յունվարի 25, յօրինեցաւ ընդդէմ Մոլեխինդ Տետրակի, Մտածութիւն ի վերայ վարդապետութեան հաշտութեան, կոչեցելոյ:

Զայս գրքոյկ ի 1838 ամի, 17 դեկտ. տեղապահ աւագ լուսարար անդամ Սիւնհոդի և կաւալէր Բարսեղ Արք Եպիսկոպոսն գրութեամբ իւր առ մեզ՝ յետ այլոց ըանից խնդրէ այսպէս:

«Յոստանամ արդարեւ՝ և ըստ խոստմանցս կարող լինիլ ջաշնամ, վասնորոյ բարձր արժանապատուութիւն ձեր կարող էք «միամիտ ըստ ամենայնի առաքել առ**») մեզ զԹիւրակէզ գեղ-«թափն, յօրինեալ ի Զէնջ աստանօր ըստ արժանոյն տեսեալ և «զննեալ, ի լոյս ընծայել ջանասցուք յօգուտ մերազնէից, իսկ Եթէ «ընդ հակառակն պատահեսցի, որում երբէք չեմ ալնկալ, յայն-«ժամ առանց իրիք խարդախութեան ստասջիք զայն ի մէնջ ամ-

*) Անուան տեղը քաց Թողամ:

Տ. ծ. վ.

**) Հետեւեալ տողերը, սկսած այստեղից մինչև այս դիւի վերջն այլ գրչով է գրած, օտար մարդու, եւ ո՛չ Մանուէլ վարդապետի, գրչու-«Թեա իս:

«բողջապէս. յուսով եմ, զի և Զերդ հայրութիւն զկարծիս ինձ») քանապատեհն ամենեւին չունիցիր յայսմ մասին, առ որ երաշխաւոր «կացուցանեմ զբարեկամութիւնն, որ ի մէնջ մեր»:

Յարգելով մեր զառջադրութիւն յիշեալ Արք եպիսկոպոսին, առաքեցաք զգրքոյկն թիւրակէս, որոյ անցքն աստ ի տեղւոջ իւրում տեսանիւ:

Յելանելն իմ ի Թիֆլիզու:

Ընդարձակութեամբ պաշտօնորտի Սրբազնագոյն Հայրապետի, ի նոյն օր, ի 10-էն մարտի, ընկերակցութեամբ Տփիսիսեցի Մեքազն վաճառականի Նունի, և Պաղտասար անուանեալ բարեպաշտ անձանց ելեալք ի Տփիսիսու, դէմ եղեալ զիմեցաք ի փափաքելին մեր յերկիր Ղրիմու Յաջողակ ճանապարհորդութեամբ ժամանեալք ի 28 մարտի, յաւուր խթման շարաթու ի նորն Նախիջևան, ուր զհանդէս Շնորհատու Հրաշափառ աւուր Յարութեանն Բրիստոսի, ընդ մեծայարգ մերազանց և Թադէոս վարդապետի հանդիսացուցեալ տօնեցաք ցնծալից բերկրութեամբք և յերրորդի աւուր Յարութեան, 31 մարտի, բարեաւ մնայ և նոցա ասացեալ և ի 11 ապրիլի ժամանեալ ի նպատակն մեր՝ Յաղամաթ, յերկիր Ղրիմու, ի գերդաստան նախաճառ գերազնիւ ի Բրիստոս հանգուցեալ Միգրիթ Իւանիչ Աղաճանովի, ընկալեալ ի բարեպաշտ այրի Սիդովնացւոյ Մարիամ Աղաճանովնայէ, և ի հոգևոր որդւոյ իմմէ Թորոս Դանիէլիչ Տեօփլեթովէ և ի բարեպաշտուհի զուգակցէ սորին Հռիփսիմէ Միգրիթովնայ Տեօփլեթեանէ, որպէս ինքեանց իսկ ծննդական Հայր, որք ցնծալից բերկրութեամբ հանդէս զուարճութեան արարին ընդ այլ բարեկամաց իւրեանց և մեր, ուր ժողովեալք այլ մանկանց իմոց յինէն դաստիարակելոց, տեսութեամբ իրերաց՝ զոհութեամբ զԱստուծոյ ուրախ եղաք ի հոգի և ի միտս մեր, որ յետ անյոյս բաժանման յիրերաց՝ հելովմամբ ինն ամաց՝ զանակնունելին, կարևոր արարեալ, հասոյց զանցնիւրս լրութեան կարօտանաց մերոց:

Մանաւանդ մինչ ի հեռաւորութեան ի Տփիսիս էի, ի 1832 և ի փետրվարի 14 վերին նախախնամութեամբն ի պսակիլ սոցա ազնիւ Թորոս Դանիէլիչ Տեօփլեթովի և գերազնուուհի Հռիփսիմէ Թիգրիթովնայի, ի նոյն թիւ 1832 և ի նոյեմբերի 29 առաջին պտուղ ընծայի սոցա յԱստուծոյ զուստր մի Մարիամ անուն, և

*) Պէտք է արգալ «զկարծիս ինձ»:

ի հետեւեալ ամի նոյեմբերի 18, յառաջագայի Արու գաւակ մի Մկրտիչ, բայց ի 1834, յուլիսի 15 վերապախեալ առ կոչողն իւր։ Ուստի ի 1835 և ի հոկտ. 20 վերըստին ի պարգեւել Արարչին ևս Արու մի, ի ջերմեռանդութենէ իւրեանց առ մեղ, անուանակոչեն դնա Մանուէլ։ Եւ յետ գալստեան մերոյ ի Ղրիմ, դարձեալ վերստին ի 1836 և ի դեկտ. 6 շնորհել Տեառն այլ ևս Արու գաւակ սոցա, բարեպաշտութեամբ իւրեանց խնդրեն ի մէնջ, զի մեք ինքնին ի Սուրբ Աւագանէ ընկալցուք զսա, վասնորոյ և մեք յօժարեալ ի ջերմեռանդ խնդիր ծնողացն, քահանայապետութեամբ էսկի Ղրիմու Տէր Սիմոն Սիմոնեանի, Յազամաթ ի սեփականութեան իւրեանց՝ վերընկալեալ ի Սուրբ Աւագանէ, ըստ նախնի կոչման մերոյ, որպէս նշանակեցաւ աստ ի չորս*) թղթահամարին, Ստեփաննոս անուանակոչութեամբ, առ որս պարտաւորեալ եմք ազօթել առ Աստուած վերնախնամ շնորհօք զարգացուցմամբ յերկար ամօք ժառանգ հայրենեաց, և ազգասէր հոգևով՝ պարծանք մեղ և մերազանց շնորհեացէ զսոսա սերնդովք իւրեանց։

Շինութիւն Սուրբ Խաչի վանուց։

Թերևս նախատեսութիւն վերին լինիլ խոստովանիլ վերադարձումն իմ ի Տփլիսու, ոչ է անտեղի, քանզի Ներսէս Արքեպիսկոպոսն թէև անուանեալ Առաջնորդ յայսոսիկ կողմանց, բայց անբաւականութեամբ առ դիպեալ պատահմանցն, անձամբ անձին ի վիճակսն ոչ է այց ելեալ, այլ՝ անձնօգուտ արամբք օտարածեալք կառավարեալ զվիճակն ամենայն։ Վասնորոյ Ղրիմու վիճակն իսպառ անխնամեալ, հասեալ յառաջին թէութեան իւրոյ, խանգարմամբ վարժարանի, և Հոգևոր կառավարութեանն ընդ հոգևորականացն, նոյնպէս և աշխարհականաց ըստ կամս անձանց յընթացս տասն ամաց կրթութեամբք, ամենայն բարեկարգութիւնք այլափոխեալք, կարօղքն յուսահատեալք, և տկարքն ոտնակոխ յոգիս ապաստանեալք ակնկալութեան վերին սպասեալք։

Որպէս յեկանեն մեր ի Նախիջևանու և ի սկզբան ապրիլին, նոյնպէս և ի 15, ի Ղրիմու գրեալ ծանուցաք զժամանելն մեր յայս կոյս, թէև զպատասխանին այլ ընդ այլոյ արտաքոյ յուսոյն մերոյ ընկալաք ի վիճակաւոր Արհւոյն, բայց ի լսելն իմ զաւերումն հիւսիսային կողման որմոյն Սուրբ Խաչ վանուցն, իբր սրախոց տոչորեալ ոգւոյս, զնացի անդ ի 27-էն մայիսի զհետ գործակալի նորին Տէր Գէորգի, բացի որմոցն, այլ և տասնեւինգ

*) Տես «Արարատ», 1915, հոկտ.-նոյեմբ. էջ 745.

սենեակսն զխանդարեալսն նորին նորոյ պատշաճ ձևովք շինեցուցեալ. նաև ի մէջ վանուցն ի հեռուստ ջուր բերեալ՝ գեղեցիկ Աղբիւր մի կամարայարկ կառուցեալք ի ներքս գաւթին, յատուկ բարեպաշտ ծախւք յիշեալ գերազնուուհի Մարիամ Աղաճանովնայի. վայելչացուցեալ զվանքն, յետ հինգ ամսոց ի 28-էն հոկտեմբերի վերադարձաք ևս յԱզամաթ, անցուցանել զխստութիւն ցրտութեանց հոգւոյ Առաջնորդին և զեղանակի ձմեռան, ի Տան նախաճառ հարապատ սիրելեացն իմոց Աղաճանեանց և Տեօլվէթեանց: Եւ ի հետեեալ ամի ի 1837 յապրիլի 15 եկեալ մեր աստ ի Սուրբ Խաչ վանքն Ղրիմու ընկերակցութեամբ թուլացեալ և տկար Ղուկաս վարդապետի և Առաջնորդն (իւ է ինչ մտօք) յանձնէ մեզ եկեղեցեաց հաշուատեսութիւնն, սկսեալ մեր ի Գէֆէու և Էսկի Ղրիմու, հասեալ մեր ի Ղարսու, եկն հասա անդ և Թաղէոս վարդապետն ի նախիջեանու յաջորդական պարտաւորութեամբ Ղրիմու կղզոյն, մեր նոյն յուլիսի 31, վերադարձաք ի սոյն Սուրբ Խաչ վանք կամք լին և մենացեալ. զի և հաշմ ընկերակիցն իմ Ղուկաս վարդապետն ցանկացեալ հայրենեացն իւր, ի 1838, դեկտեմբեր ամսոյն գնացեալ ի վանուցս, զիմեաց ի Մուշ, և ծերունի տիրացու Աղաեկ Ստեփանեան մի յԱմասիացի երկու տարով կայր ի վանքն մեզ ընկերութեամբ, և նալ ի 1839 հոկտ. 25 վախճանեալ՝ Թաղեցաւ ի գերեզմանատան վանուցն, Մեք ըստ ամենայնի մնացաք մենացեալ որպէս բու աւերակին, միայն կայր առ մեզ Էսկի Ղրիմցի պատանի մի Գէւորգ մոմճի Գա[ս]պարեան. և յաջորդ Թաղէոս վարդապետի հաճութեամբն երկուտասանամեայ Յօհաննէս Տէր Գէւորգեանն ի 1840, նոյեմբերի 15 եկն ի վանքս վասն ուսմա[ն]ց, և այլ մշակք վանուց էին և եղեն երբեմ[ն] Հայք, երբեմն Թաթարք, և երբեմն ռուսք, զի Էսկի Ղրիմու մերադն աղքատք բարձրամիտ և զաղարկակեաց են, ոչ կամին իւրեանց աշխատութեամբ ծառայելով վանուց ապրիլ, այլ մուրդաս պէս շրջին աստ և անդ:

Որպէս Սուրբ վանքս, նոյնպէս և մեք, ըստ գրեցելոյս աստ ի 66 թխթահամարին*) ի գալստե[ա]ն Ներսէս Արք Եպիսկոպոսին ի կողմն Պէղարապիոյ իբր առաջնորդ անուամբ ի 1828, յունիսի մէկէն մինչև ցայսօր, որ է 1841, անխ[ն]ամ և առանց բարեկարգութեան թողեալ, նաև զվիճակն իսկ զլիսովին, թերևս և յայլ ապառնի կեանս իւր սոյն օրինախնամ ունի թողուլ ամենայն. միայն Յաջորդն իւր Թաղէոս վարդապետն Պէկնազարեան ճախրէ և պարէ ի վիճակ Արհւոյս, և տէր նորին զրութեամբ միշտ խոստանայ այցելութիւն առնուլ փոյթ ընդ փոյթ, և իրականա-

*) Տես Արարատ 4945. նոյն-դեկտ. էջ 895.

պէս երբ լինելն չէ միում ումէք յայտ. միայն զայս գիտեմք, որպէս վիճակային ամենայն արդիւնքն, նոյնպէս և [վ]անուցս թէ հոգեբաժինք, կահք, կողոպուտք, և գանձանակքն, նոյնպէս կա- [լո]ւածոց երկու հազար Օտիարդաճ ունեցեալ վանքական գիտ- նոյն, Այսավայի երկու այգեաց և Քէֆէի անէմ խանի արդիւնսն յիշեալ յաջորդն ժողովէ, և ի կայսերէ յանուն մեր շնորհեցեալ տարեկան ռոճիկն մեր երեք հարիւր ռուբլին ևս նոյն յաջորդն ստանայ: Վանքն և մեք միայն արաւայով փայտ ծախ[ե]մք եկող փայտակրից և նովաւ ապրիմք, և զվանքն պահպա[նե]մք ման- կամ[բ]ք և մշակօք, քանիցս խնդրած եղաք որպէս Առաջնորդին, նոյնպէս և յաջորդի վասն պալէու արդեանց և ապրուստի, շահե- ցաք և ոչինչ:

Եւ փոխանակ շնորհաց՝ ընկալաք զդարանակալութիւն Յա- ջոր[դ] եղբօրէ գրութեամբ Առաջնորդին և գիտելով մեր՝ թէ ի հեղգութենէ հովուաց միշտ լինի խնդութիւն գայլոց, զբերան մեր եղեալ հողոյ՝ կամ լռիկ յանմատչելի գաղաթս լերանց ի Սուրբ Խաչ վանս Ղրիմու սպասելով վերին այցելութեան օրհասի սահ- մանեալ կենաց իմոց:

Ծանօթութիւն շարժին Արարեսու եւ կործանման Մեծ Մասիս լեռին:

Թուաց օրագիր հրատարած գաղեթիւն լուաք թէ ի 1840 փրկչական թուոյ ի 20 յունիսի յԱրարատ Մեծ շարժ եղեալ Մա- սիս լեռոն բաժանեալ, զԱկուռի գիւղ ընկղմեալ շրջապայլւք նորին:

Ի նոյն 1840 ամի, դեկտ. սկզբան գրով խնդրեցաք ի Բար- սեղ Արք Եպիսկոպոս յասպեհաէ տալ մեզ հաւատարիմ ծանօթու- թիւն և զօր նա ի 1841 մարտ 8, գրով իւր առ մեզ առաքէ, է հետեեալ ողբերգութիւնս:

«Պատմութիւն») անցից գեհնաւարժին ի Հայաստան
աշխարհ ի 1840 ամի:

«Ի 20 յունիսի ամսոյ, որ էր հինգշաբթի, տարին նահանջ, տարեգիրն չս, լուսնին 4, ձայնն աւագ կողմն, ըստ Ասիականին ժամն մետասանին չարեք պակաս, յաւարտ ընթրեաց փառարանութեանն, որ յետին սալահատակի Աթոռոյ, մինչդեռ տակաւին նստեալ կայր միաբանութիւնն, յարեաւ գետնաշարժ և ապա հետզհետէ սարսափելի սաստկութեամբ շարունակեցաւ իբրեւ բոստէս չորս ի սաստկութենէ գետնաշարժին մեծ մասն միաբանութեան բոկոտն փախեաւ ի սալայատակէն առ ահին որ զմահուես սպառնայր գործել. խաչն մեծ կաթողիկէի ուժգինս շարժեալ տարուբերէր ընդ արեւելս և ընդ արեւմուտս ահող ընթացիւր որ գողցեալ գրգայր ի վերայ Աթոռոյ տարածմամբ քառաթևեան նշանոյ իւրոյ, եկեղեցին բոլոր հանդերձ զան[գա]կատամբքն զնայր և զայր, զանգակքն միջակ եղանակաւ ինքնահար լինէին ձայն տալով մերձակայիցն զգուշանալ. սեղանն Սրբոյն Յակովբայ կրեաց նոյնպէս այլեայլութիւն ի սաստկութենէ անսովոր շարժմանն մինչի խաչք, սկիհն, մոմակալք և բոլոր բազրոցն որ ի նմայերկիր խոնարհեալ անկան, յայսմանէ մեք նախազուշակեցաք թէ վանք ինչ կամ եկեղեցի յանուն Սրբոյն Յակովբայ կործանիլ ունի կամ փլատակիլ և ի յաջորդեալ ա[ւ]ուր լուաք զտապալունն վանիցն Սրբոյն Յակովբայ, սակայն զոհութիւն Ամենաբարձրելոյն, փառք վերնախնամ տեսչութեան պահպանողական աջոյ, զի բովանդակ նիւթականք Աթոռոյս, եկեղեցին, վհարանն և միաբանք բոլոր կան և քնան ի նոյն դրութեան անփոստ, ըստ ամինայնի հանդերձ շրջակայ վանօրէիւքն յայսմ ժամու ի վերին լանջաց աւագ Մաս[ս]ոյ լայնապատար բացմամբ և անդնդախոր հերձմամբ խրամ[ա]տեալ, իբր յորձախոր անդնդաց ի վեր բղխէ զսասանեցուցիչ զարշահոտութիւն իմն կպրային և ծծմբային. կից ընդ այսմ հատեալ մասն ինչ ի նոյն իսկ լանջացն անդապոչ իմն զղրզմամբ հասանէ նախ ի վերայ մատուռի աւագանին Սրբոյն Յակովբայ, զոր տապալեալ բոլորովմբ և փացեալ ընդ քարինս նորս գլորի ի վերայ վանիցն իւրովքն կատաղի արագութեամբ

*) Սկսած այստեղից մինչև այս պիտի վերջը գրուած է ո՛չ թէ Մանուէլ վարդապետի ձեռքով, այլ ուրիշ գրութեամբ, աւելի վարժ եւ ժամանակի դիւանատնեքում ծառայողի գրչութեամբ:

գետնակուլ առեալ և դայն, դայ ժամանէ ի վերայ գեղջն Արկուռաց, զոր սուգեալ յերկիր և ընկուղեալ, անհետս առնէ գլխովին քարանցն վերոյ յիշելոյ հասանիլ ստուգեն մինչ ցառ ավին Երասխ գետոյ:

Ազրիւրն Աւագանին մնայ ցայսօր յիւրումն առաջին զրութեան՝ յորդառատ բխմամբ՝ ի վանս Սրբոյն Յակսլքայ մնացեալ են ընդ հողով մին վարդապետ, հանդերձ Խօթն աշխարհական և հոգևորական սպասաւորօր, ի գեղջն Արկուռի գետնակուլ լինել համարին անձանց իրեւ երկուց հազարաց, յորոց մասն ինչ ի Հայոց և մասն ի մարաց և ոգիք իրր տասն Հրէից, որոց տունք նոցա լինին գերեզմա[ն]ք նոցա. իսկ յապրուստ ազատելոցն յանակնունելի կործանմանէս, որք գտանէին յայնժամ յանդա[ս]տանս և յայգե[ս]տանս՝ և շրջակայ գեւղս և ի հեռաւոր քաղաքս որբացելոցն ի ծնողացն այրելոցն յարանց և զրկելոցն ի կանանց անձանց 100 և Խօթանց և ի պէտս կրկին տնաւորութեան նոցա շարժեալ ի գութ Նորին Կայսերական Մեծութեան առատաձեռնէ Ամենաողորմածարար զերկոտասան հազար մանեթս մասնակցութեամբ նախարարաց: Սոյնպէս ի շրջակայս Շարուրաց գիւղօրէից տունք Հայոց և տաճկաց խախտեցան ի հիմնաց, ի հինն Նախիջևանայ եկեղեցին Հայոց, մզկիթք Տաճկաց և տունք յերկ[ոց]ունց խախտեցան, նոյնպէս յնդէդնաձոր զաւառի հնաշէն վանորայք և եկեղեցիք Հայոց, մզկիթք Տաճկաց և բնակարանք յերկոցունց քայքայեցան և փլատակեցան ոչ սակաւ, յԱգուլիաց գաւառի Թովմայ Առաքելոյ վանքն խախտեցաւ հանդերձ բնակարան[ո]քն, եկեղեցիք Հայոց և մզկիթք Տաճկաց և տունք նոցին ուրեք խախտեցան և ուրեք հիմնայատակեցան: Սուրբ Գեղարդայ վանքն, Սիւնեաց աշխարհի Ստաթէի վանքն, Նախավկայի վանքն յերկիրն Պարսից, յԱրդաս գաւառ Թադէոս առաքելոյ վանքն, ի պարսից սահմանի Մակու անուանեալ գիւղաքաղաքն և գիւղորայք նորին հազորդեցան նոյնպէս վերատառեալ փնասուց. Պայազիտ քաղաքի բզեշխական պալատն և բերդն և քանի ինչ տունք Հայոց և Տաճկաց ոչ սակաւ փնասեցան. ի վերոյ յիշեալ բոլոր գաւառս և գիւղօրայս ի մերայնոց, ի Տաճկաց մեռան ոչ սակաւ:

Իսկ արդ ի 20-էն Յունիսի մինչ ի ցվերջ Սեկտեմբերի երկրաշարժս լինել և երևել յաճախակի և սա[ս]տկագոյն. իսկ անտի մինչև ցայսօր երբեմնակի լինի և պատահի մեղմ և սակաւ, առայս ևս գոհութիւն կրկին Ամենազթածին Աստուծոյ: Սոյնպէս լինալ է շարժ և 1827 ամի յամսեան Հոկտեմբերի յետ երից աւուրց առման ամբոցին Երևանայ, նոյնպէս տարին նահանջ, որպէս յանցեալ ամի, բայց ըստ ամենայնի առանց փնասաբերութեան:

Յիշատակեցան [յ]այսմաւուրի միոյ եղելոյ ի Սուրբ Աստուա-

ծածին հեղեղեցւոյ, որ ի Վաղարշապատ, գրեալ ոճ¹ իր թուականի Հայոց ի Զորորդում աւուր Յունիսի օրն չորեքշաբթի, եղեալ է սոյնպէս գեանաշարժ մեղմ հանդերձ երևելի ֆեստաբերութեամբք, և բազում աւերուածովք հեղեղ[եց]եաց, վանօրէից, քաղաքաց և գիւղօրէից, առաւել ևս ի վանս սրբոյն Գեղարդայ և յայսմ շնորհօք վերնախնամ այցելութեանն անփաս են մնացեալ ըստ ամենայնի և յայնժամ սուրբ Աթոռն Էջմիածնի հանդերձ իրիւք ինքեան մերձակայ եղեալ կուսանաց վանօրէիւքն: Ի Հայրապետութեան Եղիազարու Կաթողիկոսի և ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլեյմանի որդոյ փոքր Շահ Արաղի և յիշխանութեան Արարատեան նահանգի Զալ խանի և այսու ժամանակաւ շարժեաց զօրքն Պարսից խառնիճազանճ բազմութեամբ եկեալ նստեալ յերկիրն Պարսից, կամէին յառնել ի վերայ Վրաց, և յիշխանութեամբ արքայորդոյն վրաց Շահնազար և Գեօրգի խանից, այլ և յիշխանութեան օսմանեան թագաւորի Սուլթան Սուլեյմանի, որ կայր ի մէջ զաֆաղին հարուստ ժամանակաւ՝ հրամանաւ եղբօրն իւրոյ Սուլթան Մահմեաին: Սոյն ա[յ]ս գազանարարոյ սուլթան Մահմետս բազում աւերս արարեալ առ Արևելեան Քրիստոնէից ասէ հպատակեցոյց ինքեան, զոչ սակաւս քաղաքս, գաւառս և գիւղիս և փոխեալ ի վիշապ կլանել կամէր զամենեւին:

Վերադարձ Դեղթափ Թիւրակէսի:*)

Ըստ աստ ի 141 երեսն**) գրեցելոյն ստէպ խնդրանօք Բարսեղ Արքեպիսկոպոս տեղապահ և աւագ Լուսարար Սուրբ Էջմիածնի, Մեք ի սէր ուղղափառ Սուրբ եկեղեցւոյն մերոյ՝ և ի կարկուռն ամբարշտ բերանոյ զՏեառակն ի Կալկաթայ տպօղ կալուխանականաց, յարգելով զխոստումն յիշեալ արք Եպիսկոպոսին, ի 1839, մարտի 9, առաքեցաք զաշխատասիրեալն մեր զգրքոյկ Դեղթափ Թիւրակէս անուանեալն:

Խնդրելով գրութեամբ մերով՝ թէ հաճոյք ժողովոյն Սիւնհոդոսի, թէ անհաճք, մի ինչ այլ գրիչ խառնեացեն ի գրուածս մեր, բայց թէ կամք իցէ Սրբագոյն ժողովոյն նիւթ քաղել՝ և զայլ բարեգոյն յարմարն յօրինմամբ ի լոյս ածել, այն ի կամս բազմատես աչաց նոյն ժողովոյն է, զի վերաբերութիւն գործոյն ընդ-

*) Կրկին Մանուէլ վարդապետի զրչութեամբ:

**) Տես էջ 755:

հանուր եկեղեցւոյ է, և ոչ կարէ միոյ անհատ[ի] գաղտնութեանն հետեւիլ:

Քանզի յիշեալ Աւագ Լուսարար Արք եպիսկոպոսն յառ[ա]ջագոյ ի 1837, մայիսի 29, համարաթուով 45, գրէ այսպէս պատասխան.

«Թիւրակէ[ս] դեղթափն ձեր ընդդէմ լուսեռականաց իրաւելի յոյժ յամեցաւ, բայց ի մասին այն թիւնալի տետրաւիկն գրութեանց, լուսաւորչեան Սիւնհոգոս հանդերձ պրօգոսրաւ ի մեծ քննութիւնս պարապի, զի երբ քննութիւն մեր առ Քայն ընդ կարգադրեալ օրինաւոր ժուռնալով եղերեսցի, յայնժամ Քունի կամ զընդդէմն նոր ի նորոյ շարադրել և կամ զշարադրեալն «ձեր խնդրել, առ այդ անտարակոյս լերուք: Վասն այսր առարկայի կարծեմք իմաստու[ն] Սալլանդեան անկերոյթ իմն ինքն զինքն հրաժեշտ առնէ, ծածկելով զիւրն աշխատութիւն. և այլն»:

Ապա ըսա գրեցելոյ ի թիւթահամարն 141*), սոյն արք եպիսկոպոս զկնի միոյ և կէս ամի, այսինքն 1838 դեկտ. 17, և մեք առաքեմք, իսկ թէ զինչ յետ ստանալոյն վերստին գրէ Արք եպիսկոպոս այս, հետեւալ իւր բանքն ի 1839 ամի ի 27 մայիսի ցուցանէ բառ առ բառ յետ վերադարձեալն:

«Զգրութիւն ձեր ի 9-էն և ի 12 մարտի, ընդ նմին և զգրքոյկն «երկասէր աշխատանաց ձերոց՝ Թիւրակէս կոչեցեալ, ստացաք մեք ի 17 տար մայիսի, զոր ընդ ցուցանելն վեհապետիւն «Հայրապետին և Սիւնհոգոսական անդամոց, ուրախ եղաք մեք «ամենեքեանքս ընդ բաղմաւստակ աշխատութիւն Զեր, ի հասակի յորում վայել[ե]ն ձեզ աւաւել հանգիստ, քան զբաղմունք «աշխատանաց, որ պատիւ մեծ և յարգանս վերաբերէ ջանասէր «հոգևոր մշակութեան ձերում յօգու[տ] Քրիստոսի եկեղեցւոյ: «Այն գրքոյկ յանձնեցաւ ի գննութիւն Յօհաննէս վարդապետի «Շահխաթունեանց Անդամոյ Սիւնհոգոսի, թէպէտ և չիք ինչ տարակոյս զթերութեանց այնորիկ մասին հոգևոր հմտութեան, ըստ «արուեստի հայկաբանութեան, այլ սրովհետեւ քաջայայտ է ձեզ «կարգն օրինաւոր դիւանական գործառնութեան, որով շարունակի «ամենայն գործք Սիւնհոգոսիս, համաձայն բարձրագոյն կարգա- «գրութեան:

«Վասնորոյ թոյլատրեցաւ այս եղանակ դիւանական, միմիայն «վասն պահպանելոյ զկար[գ] օրինաւորութեան Ուստի և զհետեւանցն «այսորիկ գործոյս ոչ զանց արարից հաղորդել ձեզ յիւրում ժամանակի:

«Սրբազան Հայրապետն ընկալեալ զխոնարհութիւն Զերմե-

*) էջ 733.

«առնդութեան ձեր առ նա ի միասին ընդ սմին ինքնին ծանու-
եցանէ Ձեզ զիւրն Հայրապետական բարեհաճութիւն առ այն:

«Մնամ խորին յարգանօք

միշտ աղօթարար

Վասն Ձեր

(Իսկական գրեցեալ) Խոնարհ ծառայ Արքեպիսկոպոս հայոց
Բարսեղ»:

Իսկ թէ զկնի այնպիսի գրութեանց Տեղապահի և Կաթողի-
կոսի ի 1841, մարտի յ8, որպիսի օրինակաւ Սրբազոյն Սիւնհո-
ղոսի վերադարձուցանէ առ մեզ զգրքոյկն Թիւրակ[է]ս զեղթափ կո-
չեցեալն յիշեալ Բարսեղ Արք եպիսկոպոսն, բանք Սրբազոյն Սիւն-
հողոսին ի ներքոյ բացայայտէ, որ զրէ առ յիշեալ Արք եպիսկո-
պոսն և է այսպէս:

Պատմեմ.


«Հրաման*) Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին
«Ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սիւնհողոսէ Էջմիածնի
«Աւագ անդամոյ Սիւնհողոսիս, Բարձր Սրբազան Բարսեղ Արք
«Եպիսկոպոսի և Ասպետի. ըստ հրամանի Նորին Կայսերական
«Մեծութեան ի Սիւնհողոսիս լուեալ գյայտարարութիւն Բարձր
«Սրբազնութեան Ձերոյ ի 20 այսր Յունիսի համար 56, որով
«Բնդրէք վերադարձուցանել առ Բարձր Սրբազնութիւն Ձեր, մա-
«տուցեալն ի Ձէնջ ի տիպ արձանացուցանել ի 12 Յունիսի ան-
«ցեալ 1839 ամի, համարաւ 57 զգրքոյկն Թիւրակէս Դեղթափ
«անուն, յօրինեալն ի Մանուէլ վարդապետէ Շահինեանց:

«Եւ զտեղեկութիւնս, որ ի գործոց Սիւնհողոսիս. յորոց ե-
«րկի թէ ի հետեւումն յայտարարութեան Բարձր Սրբազնութեան
«Ձերոյ ի 12 Յունիսի անցեալ 1839 ամի, № 57, ընդ որում մա-
«տուցեալ էք Սիւնհողոսիս զգրքոյկ մի կոչեցեալ «Թիւրակէս
«Դեղթափ» յօրինեալ ի Մանուէլ վարդապետէն խնդրեալ էիք եթէ
«Բար[ւ]ոք համարեսցի, տալ տպել զայն համաձայն ցանկութեան
«Հարադրողի. Սիւնհողոսս ըստ զօրութեան օրագրական սահմանա-
«դրութեան իւրոյ ի 14 Յունիսի նոյն ամի, առաքեալ էր ընդ
«հրամանագրի իւրում 15 Յունիսի № 914 առ անդամն իւր
«Յովհան[ն]էս վարդապետն Շահխաթունեանց, յաղագս վե-
«րադննելոյ զայն և առաջի առնելոյ ի տնօրէնութիւն Սորին.

*) Այլ գրչով, ժամանակի Դիւանական գրութեամբ, ինչպէս նա-
խորդ նամակը Բարսեղ Արքեպիսկոպոսի, Ակուռի կարծածման մասին:

«ուստի վարդապետս այս վերադարձուցանելով յիշեալ գրքոյն
 «ընդ յայտարարութեան իւրում ի 25 Հոկտեմբերի նոյն ամի
 «յայտարարեալ էր՝ թէ նա նկատեալ է զի թղթահամարքն 38 և
 «39 ամբողջ, որ է նիւթ աղօթից քահանային ի խորհրդեան Սըր-
 «բազան Պատարագին, (Որով զհացս օրհնեալ մարմինն ճմարտա-
 «պէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի),
 «զլխովին է աղաւաղ ըստ շարադրութեանն և ըստ մտացն. իսկ
 «թղթահամարն 135, 136, 155, 178 և գրութեան, որ վասն եպիս-
 «կոպոսաց (190) կարեորք են բաղմամայն դատողութեան, եթէ
 «ուղղեսցին այնուքիկ, յայնժան զայն շարադրութիւն չէ անգետ
 «համարել պիտանի հասարակութեան Աղգի մերում: Սինհոդոսս
 «ըստ այսոցիկ պատճառանաց ըստ ղօրութեան օրագրութեան իւրոյ
 «ի 27 Հոկտեմբ. նոյն ամի առաքելով զայն ընդ հրամանագրի ի 25
 «գեկտ. համարաւ 1766 առ վերատեսուչն գրատան Էջմիածնի Ան-
 «գղամ Սինհոդոսիս Յովնաննէս վարդապետն Շահխաթունեանց
 «պատուիրեալ էր նմա ունել զայն գրքոյկ ի գրատան անդ ի շարս
 «արգիլեալ մատենից: Հրամայեցին. ընկալեալ ի յարգանս զփա-
 «ստեղծութեան Սինհոդոսիս, որ ցանկայ ունել առ ինքեան
 «զվաստակ ձերութեան իւրոյ գրքոյկն վերոյ յիշատակեալ, վերա-
 «դարձուցանել զայն նմա, զկնի արտագրելոյ ղօրինակն այնորիկ
 «վասն պահելոյ ի գրատան Աթոռոյս ընդ ձեռն բարձր Սրբազնու-
 «թեան Ձերոյ, պատուիրելով հրամանաւ, զի Բարձր Սրբազնութիւն
 «Ձեր ծանուցիք ի Ձէնջ ուղղակի զվերոյգրելոյն յիշատակեալ ձե-
 «րունի վարդապետին Մանուէլի: Իսկ վերատեսչին գրատան Աթո-
 «ռոյս տալով գիտել զայսմանէ հրամայել նմա յանձնել ղօրինակն
 «ի յիշեալ վարդապետէն գրքոյկն*) թիւրակէս ղեղթափ անուան-
 «եալ բարձր Սրբազնութեան ձերում, ղօրինակս այնորիկ պահել
 «ի գրատան անդ: Ի 20 յուլիսի 1840 ամին. իսկն ստորագրեալ է
 «Անգամ Սինհոդոսի Արքեպիսկոպոս Ստեփաննոս Արարատեանց:
 «Վաւերացուցեալ են ի պաշտաման Ատենադպրի Գարաքաշեանց,
 «և էկզեկուտար Թայիրեանց:

Համեմատեցի ի կանցէլարիատ Իսահակ Սոճայեան Գաւթ-
 եան»:



*) Սկսած հետեւեալ բառից «Թիւրակէս . . . եւն», մինչեւ վերջը,
 այլ գրչութիւն, նոյն գրիչը, որ մի ուղղում է արած էջ , փոխելով
 «Գէորդ արեղայ» անունը «Սահակ»-ով: